ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/6963/02/24 | ք. Երևան
28 Օգոստոսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի Սերգեյ Արարատի Հովհաննիսյան ԱՁ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ <<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ 07.03.2024 թվականին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24-01/088 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ <<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ի՝ խնդրելով անվավեր ճանաչել 07.03.2024 թվականին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24-01/088 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին 09.08.2024 թվականի թիվ Ε/40/1786-24 ծանուցումը:
Հայցադիմումը էլեկտրոնային համակարգով դատարան ներկայացվել է 22.08.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/6963/02/24 քաղաքացիական գործը, որը մակագրվել և հասանելի է դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին 23.08.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն

ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և ներկայացվում են Համակարգի միջոցով՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և Համակարգով ուղարկելու միջոցով:
Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող <<<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ից պետք է պահանջել <<<ԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24-01/088>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Սերգեյ Արարատի Հովհաննիսյան ԱՁ-ի ընդդեմ <<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ի՝ 07.03.2024 թվականին կնքված թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24-01/088 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. <<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել <<ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-6/24-01/088>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն էլեկտրոնային համակարգի միջոցով (բացառությամբ պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող <<Հայաստանի ատոմային էլեկտրակայան>> ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Սարգիս Երիցյան

Digitally signed by YERITSYAN SARGIS
3207830072

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am